Պարոն/Տիկին Հ. Ղոսալմյան *ին*

ստորաբաժանման ղեկավարի անուն, ազգանուն

ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի նախագահ Մեսրոպ Մեսրոպյանին

Խնդրում եմ փեղեկացնել հանձնաժողովի անդամներին, աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարներին, ինչպես նաև նախապատրաստել հակիրճ զեկույց՝ գործակարգավար. խորհրդակցությանը ներկայացնելու համար

Տիկին Ն.Գաբրիելյանին՝ ի գիտություն

Մ.Մեսրոպյան

«19» 03 2025թ.

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

1. **Գործուղվող անձանց անունը, ազգանունը՝**

- Հայկ Ղոսալմյան,
- Դավիթ Մուրադյան:

2. **Զբաղեցրած պաշտոնը՝**

- ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի ֆինանսատեխնիկական և դիմումների քննարկման վարչության պետ,
- ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի սակագնային քաղաքականության վարչության զարգացման ծրագրերի բաժնի պետ:

3. **Գործուղման վայրը և ժամկետները՝** 2025 թվականի մարտի 12-13-ը, Բելգիայի Թագավորության քաղաք Բրյուսել:

4. **Հրավիրող կողմը՝** Էներգետիկայի կարգավորողների եվրոպական խորհուրդ (CEER):

5. **Գործուղման նպատակը՝** Եվրոպական միության «Արևելյան գործընկերության երկրներում մաքուր էներգիայի անցման խթանում» ծրագրի շրջանակում «Սպառողների պաշտպանություն և հզորացում» թեմայով տարածաշրջանային դասընթաց,

6. **Քննարկված թեմաները՝**

Բացման խոսքով հանդես եկան Եվրոպական միության, Էներգետիկայի կարգավորողների եվրոպական խորհրդի և էներգետիկ համայնքի ներկայացուցիչները՝

նշելով սպառողների իրավունքների պաշտպանության կարևությունը էներգետիկայի բնագավառում:

Այնուհետև ներկայացվեցին ԵՄ երկրներում սպառողների՝ այդ թվում խոցելի համարվող սպառողների իրավունքների պաշտպանության ուղղված կարգավորումները, խոցելի համարվող սպառողների դասակարգման հիմքերը, ինչպես նաև սպառողների շահերի պաշտպանության համատեքստում կարգավորող մարմինների դերը և իրավասությունները: Նշվեց, որ որպես սպառողների իրավունքների պաշտպանության կարևոր քայլ է հանդիսանում էներգետիկ օմբուդսմենի ինստիտուտի ներդրումը, որը, ըստ էության, հաշտարարի դեր է տանում սպառողների և մատակարարների հարաբերություններում:

Այնուհետև ներկայացվեցին գործող օրենսդրական և ենթաօրենսդրական ակտերը էներգետիկ համայնքի քարտուղարության անդամ հանդիսացող որոշ երկրներում: Կրկին մեծ ուշադրություն էր դարձվում էներգետիկ ճգնաժամի պայմաններում խոցելի սպառողների իրավունքների պաշտպանությանը և նրանց համար գների զսպման մեխանիզմներին:

Իրենց փորձով հանդես եկան Հյուսիսային Մակեդոնայի, Բոսնիա և Հերցեգովինայի կարգավորող մարմինների, ինչպես նաև Սլովենիայում գործող՝ սպառողների իրավունքների պաշտպանության զբաղվող հասարակական կազմակերպության ներկայացուցիչները: Ներկայացվեցին մատակարարների կողմից սպառողներին ներկայացվող հաշվարկային փաստաթղթերում ներառվող տեղեկատվությանը ներկայացվող պահանջները, ունիվերսալ և ժամանակավոր մատակարարների գործողությունների դեմ ներկայացված սպառողների բողոքների վերլուծությունը, ինչպես նաև անբարեխիղճ գովազդային արշավները: Մասնավորապես նշվեց, որ մատակարարների կողմից սպառողներին ներկայացված հաշվարկային փաստաթղթերում պարտադիր ներկայացվում է վճարման ենթակա գումարի մանրամասն բացվածքը՝ այդ թվում շուկայի այլ մասնակիցներին վճարման ենթակա գումարները, սպառման ծավալը՝ այդ թվում նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի և այլն: Ընդ որում, սպառողները պետք է հնարավորություն ունենան տարբեր գործիքների կիրառմամբ վերլուծեն իրենց սպառման ծավալները: Առանձին ելույթ նվիրված էր գների համեմատության գործիքակազմին (price comparison tool), որը հնարավորություն է տալիս հատուկ կայքէջի միջոցով ներբեռնելով կանխատեսվող սպառման վերաբերյալ տեղեկատվությունը ստանալ

մատակարարների կողմից առաջարկվող գնառաջարկները և ընտրել լավագույն առաջարկը:

Դասընթացի երկրորդ օրը նվիրված էր հրավիրված երկրներում՝ Հայաստանում, Մոլդովայում, Վրաստանում և Ուկրաինայում գործող օրեսնդրական դաշտին: Կարևոր էին մասնակից երկրներում ներդրված՝ սպառողների իրավունքների պաշտպանության զբաղվող ինստիտուտները: Այսպես, մի շարք երկրներում ներդրված էր էներգետիկ օմբուդսմենի ինստիտուտը, որը, ինչպես նշվեց, կատարում էր հաշտարարի դեր: Որոշ երկրներում կարգավորող մարմնին դիմելու պարտադիր պայման էր նախապես մատակարար կազմակերպությանը դիմելու և պատասխան ստանալու պահանջը: Առանձնակի ուշադրության էին արժանի նաև մասնակից երկրներում կարգավորող մարմինների կառուցվածքային առանձնահատկությունները, մասնավորապես, բացառապես սպառողների բողոքներով զբաղվող մասնագիտացված ստորաբաժանումների առկայությունը:

7. Հանդիպումները, ելույթները՝ Հանդիպումներ են կայացել ասոցիացիայի անդամ հանդիսացող երկրների պատվիրակների հետ: Հանդիպման երկրորդ օրը հայկական կողմը ներկայացրել է էներգետիկայի բնագավառում և ջրային ոլորտում սպառողների շահերին վերաբերող կարգավորումները, ներկայացված դիմում բողոքների վերլուծությունը և սպառողներին վճարվող տույժերի վերաբերյալ կարգավորումները:

8.Հանդիպումների ժամանակ ընդունված որոշումները՝ Հանդիպման ժամանակ որոշումներ չեն ընդունվել:

Հայկ Դոսալման ---------- 19.03.2025 ----------
(ստորագրությունը, ամսաթիվը)

Դավիթ Մուրադյան ---------- 19.03.2025թ. ----------
(ստորագրությունը, ամսաթիվը)

Հավելված N 3
ՀՀ վարչապետի 2018 թ.
սեպտեմբերի 19-ի N 1230-Ն որոշման

Օրինակելի ձև

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԾԱԽՍԵՐԻ ՀԱՇՎԱՐԿԻ ՄԱՍԻՆ

1. Մարմնի անվանումը __Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով___

2. Գործուղման մասին իրավական ակտի համարը **Հրաման 100-ՀՆ, 25.02.2025թ. Հրաման 099-ԳՔ, 25.02.2025թ**

ՀՀ ՀԾԿ հանձնաժողովի ֆինանսատեխնիկական և դիմումների քննարկման վարչության պետ՝ **Հայկ Ղոսալմյանի**

ՀՀ ՀԾԿ հանձնաժողովի սակագնային քաղաքականության վարչության զարգացման ծրագրերի բաժնի պետ՝ **Դավիթ Մուրադյան**

(*թվարկել՝ պատվիրակություն գործուղելու դեպքում*)

4. Գործուղման վայրը ք.**Բրյուսել** **/Բելգիայի Թագավորություն/**

5. Գործուղման ժամկետները **11.03.2025-14.03.2025 թթ**

6. Գործուղման ծախսերի ֆինանսավորման աղբյուրը՝

1) հրավիրող կողմի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը
(թվարկել՝ **ճանապարհածախս, գիշերավարձ**, օրապահիկ և այլն)

2) պետական բյուջեի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը
(թվարկել՝ ճանապարհածախս, գիշերավարձ**, օրապահիկ և այլն**)

(*ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2335-Ն որոշմանը համապատասխան*)

(*ընդգծել ծախսերի փոխհատուցման տարբերակը*)

V ա. փաստացի կատարված ծախսերը հիմնավորող փաստաթղթերի հիման վրա՝ դրանցով սահմանված չափով, բայց ոչ ավելի, քան ցանկով նախատեսված չափերը

□ բ. գործուղման անհատական իրավական ակտով տվյալ գործուղման փաստացի կատարված ծախսերի հատուցման պահանջի համաձայն

Ծախսի տեսակը		Հայկ Ղոսալմյան	Դավիթ Մուրադյան	Ընդամենը (հազ. դրամ)
Ճանապար-հածախս	Ավիածառայության տեսակը (էկոնոմ դաս)			-
	Ավիատոմսի արժեքը (դրամ)			-
Գիշերավարձ	Վճարը 1 օրվա համար (արտարժույթով՝ եվրո)			
	Վճարը 1 օրվա համար (դրամ)			
	Օրերի քանակը			
	Ընդամենը (դրամ)			-
Օրապահիկ	Վճարը 1 օրվա համար (արտարժույթով եվրո)	126	126	
	Վճարը 1 օրվա համար (դրամ)	52,047	52,047	
	Օրերի քանակը	4	4	
	Ընդամենը (դրամ)	208,187	208,187	416.374
Այլ ծախսեր	Հակահամաճարակային նմուշառումների վճար			
	Մուտքի արտոնագրի վճար			-
	Այլ ծախսեր (*նկարագրել*)			
Ընդամենը ծախսեր (հազ. դրամ)		208,187	208,187	416.374

Գլխավոր ֆինանսիստի

(հավելվածը լրաց. 23.03.23 N 326-Ն)

Ամսաթիվ 18.03.2025թ.